



*Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 135*

## **Հակադոպինգային կոնվենցիա**

Ոչ պաշտոնական թարգմանություն

**Ստրասբուրգ, 16.XI.1989թ.**

## Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, Եվրոպական մշակութային կոնվենցիային միացած պետություններն ու սույն Կոնվենցիան ստորագրած պետությունները,

Համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է առավել սերտ միասնություն հաստատել իր անդամ պետությունների միջև՝ իրենց միասնական ժառանգությունը հանդիսացող գաղափարներն ու սկզբունքները պահպանելու և կյանքի կոչելու, և տնտեսական ու սոցիալական առաջընթացին նպաստելու նպատակով,

Գիտակցելով, որ սպորտը պետք է կարևոր դեր խաղա առողջության պաշտպանության, բարոյական և ֆիզիկական կրթության և միջազգային փոխըմբռնման խթանման գործում,

Մտահոգված լինելով սպորտում մարզիկների և մարզուհիների կողմից դոպինգային միջոցների և մեթոդների աճող օգտագործմամբ և մասնակիցների առողջության և սպորտի ապագայի նկատմամբ դրանց հետևանքներով,

Մտապահելով, որ այս խնդիրը վտանգում է Օլիմպիական խարտիայում, Յունեսկոյի Սպորտի և ֆիզիկական կրթության միջազգային խարտիայում և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (76) 41 բանաձևում, որը հայտնի է որպես «Եվրոպական սպորտ բոլորի համար խարտիա», ամրագրված բարոյական սկզբունքներն ու կրթական արժեքները,

Մտապահելով՝ միջազգային մարզական կազմակերպությունների ընդունած հակադոպինգային կանոնները, միջոցառումներն ու հայտարարությունները,

Հասկանալով, որ պետական իշխանություններն ու կամավոր մարզական կազմակերպություններն սպորտում դոպինգի դեմ պայքարելու գործում ունեն փոխլրացնող պարտականություններ, հատկապես մարզական միջոցառումների պատշաճ կազմակերպման երաշխավորումն՝ արդար խաղի սկզբունքի հիման վրա, և դրանց մասնակիցների առողջության պաշտպանությունը,

Ճանաչելով, որ այս իշխանություններն ու կազմակերպությունները պետք է այս նպատակով միասին աշխատեն բոլոր համապատասխան մակարդակներում,

Վերհիշելով դոպինգի վերաբերյալ Սպորտի համար պատասխանատու Եվրոպական նախարարների համաժողովի բանաձևերը և հատկապես 1989թ. Ռեյկյավիկի 6-րդ համաժողովում ընդունված թիվ 1 բանաձևը,

Վերհիշելով, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն արդեն ընդունել է Մարզիկների դոպինգի մասին թիվ (67) 12 բանաձևը, Սպորտում դոպինգի մասին թիվ (79) 8 հանձնարարականը, «Սպորտի մասին Եվրոպական հակադոպինգային խարտիայի» վերաբերյալ թիվ (84) 19 հանձնարարականը և Մրցույթներից դուրս ընկած ժամանակահատվածներում առանց նախազգուշացման դոպինգային վերահսկման հաստատման մասին թիվ (88) 12 հանձնարարականը,

Վերհիշելով 1988թ. Յունեսկոյի կողմից Մոսկվայում կազմակերպված Սպորտի և ֆիզիկական կրթության համար պատասխանատու նախարարների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների 2-րդ միջազգային համաժողովում ընդունված Դոպինգի մասին թիվ 5 հանձնարարականը,

Վճռորոշ լինելով առավել խորացնել և ամրացնել սպորտում դոպինգի նվազեցման և վերջնական վերացմանն ուղղված համագործակցությունը, որպես հինք օգտագործելով այդ փաստաթղթերում ամրագրված բարոյական արժեքներն ու պրակտիկ միջոցառումները,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

#### **Հոդված 1 – Կոնվենցիայի նպատակը**

Կողմերը, սպորտում դոպինգի նվազեցման և վերջնական վերացման նպատակով, պարտավորվում են իրենց համապատասխան սահմանադրական դրույթների շրջանակներում, ձեռնարկել սույն Կոնվենցիայի դրույթները կիրառելու համար անհրաժեշտ միջոցառումներ,

#### **Հոդված 2 – Սահմանումն ու Կոնվենցիայի շրջանակը**

- 1 Սույն կոնվենցիայի նպատակներով.
  - ա. «դոպինգը սպորտում» նշանակում է դոպինգային միջոցների դեղաբանական տիպերով կամ դոպինգի մեթոդներով մարզիկներին և մարզուհիներին մատակարարելը կամ նրանց կողմից դրանց օգտագործումը,
  - բ. «դոպինգային միջոցների դեղաբանական տիպեր կամ դոպինգի մեթոդներ» համաձայն հաջորդիվ շարադրված պարբերության 2-ի, նշանակում է դոպինգային միջոցների կամ մեթոդների այն տիպերը, որոնք արգելված են համապատասխան միջազգային մարզական կազմակերպությունների կողմից և որոնք նշվում են մոնիտորինգի խմբի կողմից Հոդված 11.1.բ-ի համաձայն ընդունված ցուցակներում,
  - գ. «մարզիկներն ու մարզուհիները» այն անձինք են, ովքեր պարբերաբար մասնակցում են կազմակերպված մարզական միջոցառումներին,
- 2 Մինչև արգելված դոպինգային միջոցների դեղաբանական տիպերի կամ դոպինգի մեթոդների ցուցակի ընդունումը մոնիտորինգի խմբի կողմից Հոդված 11.1.բ-ի համաձայն, պետք է կիրառվի սույն Կոնվենցիայի հավելվածում նշված ցուցակը,

#### **Հոդված 3 – Ներպետական համակարգումը**

- 1 Կողմերը պետք է համակարգեն սպորտում դոպինգի դեմ պայքարող իրենց կառավարական հիմնարկների և այլ պետական մարմինների քաղաքականությունն ու քայլերը:
- 2 Նրանք պետք է ապահովեն, որ սույն Կոնվենցիայի պրակտիկ կիրառման հնարավորություն լինի, և հատկապես, որ կատարվեն Հոդված 7-ում ամրագրված պահանջները, անհրաժեշտության դեպքում Կոնվենցիայի որոշ դրույթների կատարումը վստահելով իրենց կողմից նշանակված կառավարական կամ ոչ կառավարական մարզական իշխանություններին կամ մարզական կազմակերպություններին,

#### **Հոդված 4 – Արգելված դոպինգային նյութերի և մեթոդների առկայությունն ու օգտագործումը սահմանափակելու միջոցները**

- 1 Կողմերը անհրաժեշտության դեպքում պետք է ընդունեն օրենքներ, կարգավորող ակտեր կամ վարչական միջոցներ սպորտում արգելված դոպինգային միջոցների և դոպինգի մեթոդների և հատկապես անաբոլիկ ստերոիդների առկայությունը (ներառյալ շարժը, պահպանումը, ներմուծումը, տարածումն ու վաճառքը վերահսկող դրույթներ) ինչպես նաև օգտագործումը սահմանափակելու համար:
- 2 Այս նպատակով, Կողմերը կամ, որտեղ կիրառելի է, համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունները պետք է հակադոպինգային կանոնների արդյունավետ կիրառումը դարձնեն մարզական կազմակերպություններին հանրային ֆոնդերի տրամադրման չափանիշ:

- 3 Կողմերը նաև պետք է.
- ա. օժանդակեն իրենց մարզական կազմակերպություններին ֆինանսավորել դոպինգի վերահսկումն ու վերլուծությունները, կամ ուղղակի սուբսիդիաների կամ դրամաշնորհների միջոցով, կամ հաշվի առնելով ստուգումների և վերլուծությունների ծախսերը այդ կազմակերպություններին տրամադրվող ընդհանուր սուբսիդիաների կամ դրամաշնորհների ընդհանուր չափերը որոշելիս,
  - բ. ձեռնարկել համապատասխան միջոցներ դադարեցնելու սպորտում դոպինգային հանցանքի պատճառով կասեցված կարգավիճակ ստացած անհատ մարզիկներին և մարզուհիներին կրթական նպատակներով պետական ֆոնդերից տրվող սուբսիդիաների տրամադրումը՝ կասեցման ժամանակաշրջանում,
  - գ. խրախուսել և, որտեղ անհրաժեշտ է, նպաստել իրենց մարզական կազմակերպությունների կողմից իրավասու միջազգային մարզական կազմակերպությունների պահանջած դոպինգային ստուգումների անցկացումը մրցումների ժամանակ և դրանցից դուրս, և
  - դ. խրախուսել ու նպաստել, որ մարզական կազմակերպությունները համաձայնության գան պայմանագրերի շուրջ, որոնք իրենց անդամներին հնարավորություն է տալիս դոպինգային վերահսկողության համապատասխան լիազորություն ունեցող աշխատատեղերի կողմից ստուգման ենթարկվել այլ երկրներում:
- 4 Կողմերն իրենց են վերապահում հակադոպինգային ընթացակարգերի ընդունումը և իրենց սեփական նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ դոպինգային ստուգումներ կազմակերպելը, եթե դրանք համատեղելի են սույն Կոնվենցիայի համապատասխան սկզբունքների հետ:

#### **Հոդված 5 – Լաբորատորիաները**

- 1 Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.
- ա. ստեղծել կամ նպաստել իր տարածքում մեկ կամ ավելի դոպինգային ստուգման լաբորատորիաների հիմնադրմանը, որոնք համապատասխանում են պետական գրանցման պահանջներին՝ ըստ համապատասխան միջազգային մարզական կազմակերպությունների ընդունած և Հոդված 11.1.բ-ի դրույթների ներքո մոնիտորինգի խմբի հավանությանը արժանացած չափանիշների, կամ
  - բ. օժանդակել իր մարզական կազմակերպություններին այլ Կողմերի տարածքում նման լաբորատորիաների ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենալուն:
- 2 Այդ լաբորատորիաները պետք է խրախուսվեն.
- ա. համապատասխան քայլեր ձեռնարկել, որ աշխատանքի ընդունվեն, շարունակեն աշխատել, պատրաստվեն և վերապատրաստվեն որակյալ աշխատակիցներ,
  - բ. ձեռնարկել սպորտում դոպինգի համար օգտագործվող կամ ենթադրաբար օգտագործվող դոպինգային միջոցների և մեթոդների վերաբերյալ համապատասխան հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացումը և վերլուծական կենսաքիմիայի և դեղաբանության ուսումնասիրումը՝ նպատակ ունենալով առավել լավ հասկանալ տարբեր նյութերի ազդեցությունը մարդու մարմնի և դրանց հետևանքները մարզական հաջողությունների վրա,
  - գ. արագ հրապարակել և տարածել իրենց հետազոտությունների նոր տվյալները :

**Հոդված 6 – Կրթությունը**

- 1 Կողմերը պարտավորվում են մշակել և իրականացնել, նպատակահարմարության դեպքում համապատասխան մարզական կազմակերպությունների և լրատվամիջոցների հետ համագործակցությամբ, կրթական ծրագրեր և տեղեկատվական արշավներ՝ շեշտելով դոպինգային նյութերում առկա առողջության համար վտանգները և սպորտի բարոյական արժեքների նկատմամբ դրանց վնասը: Նման ծրագրերն ու արշավները պետք է ուղղված լինեն դպրոցների և սպորտային ակումբների երիտասարդներին և նրանց ծնողներին ու չափահաս մարզիկներին ու մարզուհիներին, սպորտի ոլորտի պաշտոնյաներին և մարզիչներին: Բժշկությամբ զբաղվողների համար, նման կրթական ծրագրերը կշեշտեն բժշկական էթիկայի նկատմամբ հարգանքը:
- 2 Կողմերը պարտավորվում են խրախուսել և խթանել, համապատասխան տարածաշրջանային, ազգային և միջազգային մարզական կազմակերպությունների հետ համագործակցությամբ, գիտական ֆիզիոլոգիական և հոգեբանական մարզումների ծրագրերի մշակման ձևերի և միջոցների վերաբերյալ հետազոտությունը, որոնք հարգում են մարդկային անձի ամբողջականությունը:

**Հոդված 7 – Մարզական կազմակերպությունների հետ համագործակցությունը նրանց կողմից ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ**

- 1 Կողմերը պարտավորվում են խրախուսել իրենց մարզական կազմակերպություններին և նրանց միջոցով միջազգային մարզական կազմակերպություններին մշակել և կիրառել իրենց իրավասության տակ գտնվող բոլոր պատշաճ միջոցներն ընդդեմ սպորտում դոպինգի: .
- 2 Այս նպատակով, նրանք պետք է խրախուսեն իրենց մարզական կազմակերպություններին հստակեցնել և ներդաշնակեցնել իրենց համապատասխան իրավունքները, պարտականությունները և խնդիրները՝ մասնավորապես ներդաշնակեցնելով իրենց.
  - ա. հակադոպինգային կանոնները՝ հիմնվելով համապատասխան միջազգային մարզական կազմակերպությունների կողմից փոխհամաձայնեցված կանոններին,
  - բ. արգելված դոպինգային միջոցների դեղաբանական տիպերի և դոպինգի մեթոդների ցուցակները՝ հիմնվելով համապատասխան միջազգային մարզական կազմակերպությունների կողմից փոխհամաձայնեցված ցուցակներին,
  - գ. դոպինգային վերահսկման ընթացակարգերը;
  - դ. կարգապահական ընթացակարգերը, կիրառելով բնական արդարության փոխհամաձայնեցված միջազգային սկզբունքները և երաշխավորելով, որ հարգվեն կասկածյալ մարզիկների և մարզուհիների հիմնարար իրավունքները: Այս սկզբունքները պետք է ներառեն.
    - i որ զեկուցող և կարգապահական մարմինները լինեն տարբեր,
    - ii նման անձանց արդար դատավարության և օգնություն ստանալու կամ ներկայացուցիչ ունենալու իրավունքը,
    - iii պարզ և կիրառելի դրույթներ՝ ցանկացած դատավճիռը բողոքարկելու համար:
  - ե. արդյունավետ պատիժների ընթացակարգի ներդրում պաշտոնյաների, բժիշկների, անասնաբույժների, մարզիչների, հոգեբույժների և այլ պաշտոնյաների կամ աշխատակիցների համար, ովքեր առնչվում են մարզիկների և մարզուհիների կողմից

հակադոպինգային օրենքների խախտմանը,

- գ. նույն կամ այլ երկրներում այլ մարզական կազմակերպությունների կողմից կիրառված կասեցումների և այլ պատիժների փոխադարձ ճանաչման ընթացակարգեր:
- 3 Ավելին, Կողմերը պետք է քաջալերեն իրենց մարզական կազմակերպություններին՝
- ա. կիրառելի մակարդակում ներմուծել, նախնական կամ առանց նախնական ծանուցման, դոպինգային ստուգում մրցումներից դուրս ընկած ցանկացած հարմար ժամանակ: Նման ստուգումը պետք է կատարվի բոլոր մարզիկների և մարզուհիների համար հավասարազոր եղանակով և պետք է ներառի, անհրաժեշտության դեպքում, պատահաբար կերպով ընտրված մարդկանց ստուգում ու վերստուգում,
  - բ. այլ երկրների մարզական կազմակերպությունների հետ բանակցել պայմանագրերի շուրջ, որոնք թույլ կտան այլ երկրում մարզվող մարզիկին կամ մարզուհուն ստուգման ենթարկվել այդ երկրի համապատասխան լիազորություն ունեցող դոպինգային վերահսկման աժխատակիցների կողմից,
  - գ. հստակեցնել և ներդաշնակեցնել մարզական միջոցառումներին մասնակցությունը թույլատրող կանոնները՝ ներառելով հակադոպինգային չափանիշներ,
  - դ. խթանել մարզիկների և մարզուհիների ակտիվ մասնակցությունը միջազգային մարզական կազմակերպությունների հակադոպինգային աշխատանքներում,
  - ե. լիովին և արդյունավետ կերպով օգտագործել Հոդված 5-ում նշված դոպինգային վերլուծության համար լաբորատորիաներում առկա պայմանները՝ մրցումների ընթացքում և դրանցից դուրս ընկած ժամանակահատվածներում,
  - զ. ուսումնասիրել մարզման գիտական մեթոդները և մշակել յուրաքանչյուր մարզածևին համապատասխան բոլոր տարիքի մարզիկների և մարզուհիների պաշտպանությանն ուղղված ուղենիշներ:

#### **Հոդված 8 – Միջազգային համագործակցություն**

- 1 Կողմերը պետք է սերտորեն համագործակցեն սույն Կոնվենցիայով սահմանված հարցերի շուրջ և պետք է խրախուսեն նման համագործակցություն իրենց մարզական կազմակերպությունների միջև:
- 2 Կողմերը պարտավորվում են.
  - ա. խրախուսել, որ իրենց մարզական կազմակերպությունները գործեն այնպես, որ խթանվի սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը բոլոր այն համապատասխան միջազգային մարզական կազմակերպություններում, որոնց նրանք անդամակցում են, ներառյալ առանց վավեր ճանաչված բացասական դոպինգային ստուգման զեկույցների միջազգային և տարածաշրջանային ռեկորդները վավերացնելուց հրաժարվելը,
  - բ. խթանել Հոդված 5-ի դրույթների համաձայն հիմնադրված և գործող դոպինգային վերահսկման իրենց լաբորատորիաների աշխատակիցների միջև համագործակցությունը,
  - գ. նախաձեռնել իրենց համապատասխան գործակալությունների, իշխանությունների և կազմակերպությունների միջև երկկողմանի և բազմակողմանի համագործակցությունը, որպեսզի նաև միջազգային մակարդակում ի կատար ածվեն Հոդված 4.1-ում շարադրված նպատակները:

- 3 Կողմերը, որոնք ունեն Հոդված 5-ի ներքո հիմնադրված կամ գործող լաբորատորիաներ, պարտավորվում են օժանդակել մյուս Կողմերին ձեռք բերել իրենց սեփական լաբորատորիաները հիմնելու համար անհրաժեշտ փորձ, հմտություններ և ունակություններ:

#### **Հոդված 9 – Տեղեկատվության տրամադրում**

Յուրաքանչյուր Կողմ պետք է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով ուղարկի սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման հետ կապված իր կողմից ձեռնարկված օրենսդիր և այլ քայլերի վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկատվությունը:

#### **Հոդված 10 – Մոնիտորինգի խումբը**

- 1 Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով հիմնադրվում է մոնիտորինգի խումբը:
- 2 Ցանկացած Կողմ կարող է ներկայացված լինել մոնիտորինգի խմբում մեկ կամ ավելի պատվիրակներով: Յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայնի իրավունք:
- 3 Հոդված 14.1-ում հիշատակված ցանկացած պետություն, որը սույն Կոնվենցիայի անդամ չէ կարող է մոնիտորինգի խմբում ներկայացված լինել որպես դիտորդ:
- 4 Մոնիտորինգի խումբը կարող է միաձայն որոշմամբ Կոնվենցիային չանդամակցող Եվրոպայի խորհրդի անդամ պետություն չհանդիսացող ցանկացած պետության և ցանկացած մարզական և այլ համապատասխան մասնագիտական կազմակերպությանը հրավիրել որպես դիտորդ ներկա լինել իր մեկ կամ մի քանի հանդիպումներին :
- 5 Մոնիտորինգի խումբը գումարում է Գլխավոր քարտուղարը: Իր առաջին հանդիպումը պետք է տեղի ունենա ողջամիտ ժամկետում, հնարավորս շուտ ժամանակահատվածում, և ոչ ուշ քան Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրից մեկ տարվա ընթացքում: Այնուհետև այն պետք է գումարվի ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր քարտուղարի կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ:
- 6 Մոնիտորինգի խմբի հանդիպումը գումարելու համար պետք է ապահովվի քվորում՝ Կողմերի մեծամասնությամբ:
- 7 Մոնիտորինգի խումբը պետք է ունենա դռնփակ հանդիպումներ:
- 8 Համաձայն սույն Կոնվենցիայի դրույթների՝ մոնիտորինգի խումբը մշակում է և կրնսենսուսով ընդունում իր սեփական Կանոնակարգը:

#### **Հոդված 11**

- 1 Մոնիտորինգի խումբը վերահսկում է սույն Կոնվենցիայի կիրառումը: Այն մասնավորապես կարող է.
- ա. վերանայել սույն Կոնվենցիայի դրույթները և ուսումնասիրել անհրաժեշտ ցանկացած փոփոխություն,
  - բ. հավանություն տալ Հոդվածներ 2.1-ում և 2.2-ում հիշատակված համապատասխան միջազգային մարզական կազմակերպության կողմից արգելված դրային գային միջոցների դեղաբանական տիպերի և դրային գային մեթոդների ցուցակը կամ դրա փոփոխությունները, և վերոնշյալ կազմակերպությունների կողմից ընդունված լաբորատորիաների գրանցման չափանիշները՝ համաձայն Հոդված 5.1-ի, և նշանակել

համապատասխան որոշումների ուժի մեջ մտնելու ժամկետը,

- գ. համապատասխան մարզական կազմակերպությունների հետ ունենալ խորհրդակցություններ,
  - դ. Կողմերին սույն Կոնվենցիայի նպատակներով կիրառվելիք միջոցների վերաբերյալ անել առաջարկություններ,
  - ե. սույն Կոնվենցիայի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ համապատասխան միջազգային կազմակերպություններին և հանրությանը իրազեկելու վերաբերյալ համապատասխան միջոցառումներ առաջարկել,
  - զ. Նախարարների կոմիտեին առաջարկություններ ներկայացնել սույն Կոնվենցիային միանալ հրավիրվող Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների վերաբերյալ,
  - է. ներկայացնել սույն Կոնվենցիան կատարելագործելուն ուղղված ցանկացած առաջարկություն:
- 2 Իր գործառնություններն իրականացնելու համար մոնիտորինգի խումբն իր նախաձեռնությամբ կազմակերպում է փորձագետների խմբերի հանդիպումներ:

#### **Հոդված 12**

Յուրաքանչյուր հանդիպումից հետո մոնիտորինգի խումբը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ներկայացնում է իր աշխատանքների և Կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ զեկույց:

#### **Հոդված 13 – Սույն Կոնվենցիայի հոդվածների փոփոխությունները**

- 1 Սույն Կոնվենցիայի հոդվածներում փոփոխություններ կարող է առաջարկել պայմանագրի կողմ հանդիսացող պետությունը, Նախարարների կոմիտեն կամ մոնիտորինգի խումբը:
- 2 Փոփոխության վերաբերյալ ցանկացած փոփոխություն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ներկայացնում է Հոդված 14-ում նշված պետություններին և յուրաքանչյուր այն պետությանը, որ համաձայն Հոդված 16-ի միացել կամ հրավիրվել է միանալ սույն Կոնվենցիային:
- 3 Կողմերից մեկի կամ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկված ցանկացած փոփոխություն մոնիտորինգի խմբին ներկայացվում է նրանց հանդիպումից, որտեղ այն պետք է քննարկվի, առնվազն երկու ամիս առաջ: Մոնիտորինգի խումբն առաջարկված փոփոխության վերաբերյալ Նախարարների կոմիտեին է ներկայացնում իր կարծիքը՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով համապատասխան մարզական կազմակերպության հետ:
- 4 Նախարարների կոմիտեն քննարկում է առաջարկված փոփոխությունը և մոնիտորինգի խմբի ներկայացրած կարծիքը և կարող է ընդունել փոփոխությունը:
- 5 Սույն հոդվածի պարբերություն 4-ի համաձայն Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ցանկացած փոփոխության տեքստը ներկայացվում է Կողմերի ընդունմանը:
- 6 Սույն հոդվածի պարբերություն 4-ի համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Գլխավոր քարտուղարին դրա ընդունման վերաբերյալ Կողմերի տեղեկացման օրից մեկամսյա ժամանակաշրջան:

**Եզրափակիչ դրույթներ****Հոդված 14**

- 1 Սույն Կոնվենցիան բաց է ստորագրության Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ այլ պետությունների և անդամ չհանդիսացող այն պետությունների համար, որոնք դրանով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը կարող են արտահայտել այն.
  - ա. ստորագրելով՝ առանց վավերացմանը, ընդունմանը կամ հաստատմանը վերաբերող վերապահման, կամ
  - բ. ստորագրելով՝ վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանով, հետագայում վավերացնելով, ընդունելով կամ հաստատելով:
- 2 Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

**Հոդված 15**

- 1 Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է մեկամսյա ժամանակաշրջան այն օրից, երբ հինգ պետություններ, ներառյալ առնվազն Եվրոպայի խորհրդի չորս անդամ պետություն, արտահայտել են իրենց համաձայնությունը պարտավորված լինել Կոնվենցիայի դրույթներին՝ համաձայն Հոդված 14-ի դրույթների:
- 2 Կոնվենցիան ստորագրած ցանկացած պետության նկատմամբ, որն այնուհետև իր համաձայնությունն է հայտնում պարտավորված լինել դրա դրույթներով, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթի ի պահ տրման օրից մեկամսյա ժամանակաշրջան:

**Հոդված 16**

- 1 Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, խորհրդակցելով Կողմերի հետ, կարող է Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Հոդված 20.դ-ի համաձայն, ձայների մեծամասնությամբ և Կոմիտեում ներկա լինելու իրավունք ունեցող պայմանագրի կողմ հանդիսացող Պետությունների ներկայացուցիչների միաձայն որոշմամբ, անդամ չհանդիսացող ցանկացած պետության հրավիրել միանալ Կոնվենցիային:
- 2 Միացող ցանկացած պետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միացման փաստաթղթի ի պահ տրման օրից մեկամսյա ժամանակաշրջան:

**Հոդված 17**

- 1 Ցանկացած պետություն կարող է ստորագրման կամ վավերացման, ընդունման, հավանության կամ միացման փաստաթղթի ի պահ տալու ժամանակ նշել այն տարածքը կամ տարածքները, որտեղ կիրառվելու է սույն Կոնվենցիան:
- 2 Ցանկացած պետություն կարող է հետագայում Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ տարածել Կոնվենցիայի կիրառումը այդ հայտարարությունում նշված ցանկացած այլ տարածքի նկատմամբ: Նման տարածքի նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Գլխավոր քարտուղարի կողմից այդ հայտարարության ստացման օրից մեկամսյա ժամանակաշրջան:

- 3 Նախորդ երկու պարբերությունների համաձայն արված ցանկացած հայտարարություն կարող է նման հայտարարությունում նշված ցանկացած տարածքի նկատմամբ հետ կանչվել՝ Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ: Նման հետկանչումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցման ստացման օրից վեց ամսյա ժամանակաշրջան:

### Հոդված 18

- 1 Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել Կոնվենցիայից՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ:
- 2 Նման հրաժարումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցման ստացման օրվան հաջորդող վեցամսյա ժամանակաշրջան:

### Հոդված 19

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցում է Կողմերին, Եվրոպայի խորհրդի անդամ այլ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ այլ պետություններին, անդամ չհանդիսացող պետություններին, որոնք մասնակցել են Կոնվենցիայի մշակմանը և ցանկացած պետությանը, որը միացել կամ հրավիրվել է միանալ.

- ա. Հոդված 14-ի համաձայն յուրաքանչյուր ստորագրման մասին,
- բ. Հոդվածներ 14-ի կամ 16-ի համաձայն՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնման մասին,
- գ. Հոդվածներ 15-ի և 16-ի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- դ. Հոդված 9-ի դրույթների համաձայն ուղարկված ցանկացած տեղեկատվության մասին,
- ե. Հոդված 12-ի դրույթներն ի կատար ածելուն ուղղված պատրաստված ցանկացած զեկույցի մասին,
- զ. Հոդված 13-ի համաձայն ընդունված ցանկացած առաջարկության կամ փոփոխության, և այդ փոփոխության ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- է. Հոդված 17-ի դրույթների ներքո արված ցանկացած հայտարարության մասին,
- ը. Հոդված 18-ի ներքո արված ցանկացած ծանուցման և հրաժարման ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- թ. Կոնվենցիային վերաբերող յուրաքանչյուր այլ գործողության, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Ստորագրված է Ստրասբուրգում, 1989թ. նոյեմբերի 16-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը վավերացված օրինակներն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր

անդամ պետությանը, Եվրոպական մշակութային կոնվենցիային անդամ այլ պետություններին, անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը և դրան միանալ հրավիրված ցանկացած այլ պետության:

ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (ԵԽՊ Թիվ 135)

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒՄ<sup>1</sup>  
 հաստատված Մոնիտորինգի խմբի 26-րդ հանդիպմանը  
 Կոնվենցիայի Հոդված 11.1բ-ին համապատասխան  
 (Ստրասբուրգ, նոյեմբերի 12, 2007թ.)

2008թ. ԱՐԳԵԼՎԱԾ ՑՈՒՑԱԿ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 2008թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

ՄՇՏԱՊԵՍ ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ (ՄՐՑՈՒԹԱՅԻՆ  
 ԵՎ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

### ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

#### Տ1. ԱՆԱԲՈՒԿ ՆՅՈՒԹԵՐ

Անաբուլիկ նյութերն արգելված են:

##### 1. Անաբուլիկ անդրոգենային ստերոիդներ (AAS)

ա. Էկզոգենային\* անաբուլիկ անդրոգենային ստերոիդներ, ներառյալ.

**1-անդրոստենդիոլ** (5α-անդրոստ-1-են-3β,17β-դիոլ), **1-անդրոստենդիոն** (5α-անդրոստ-1-են-3,17-դիոն), **բուլանդիոլ** (19-նորանդրոստենդիոլ), **բուլաստերոն**, **բուլդենոն**, **բուլդիոն** (անդրոստա-1,4-դիեն-3,17-դիոն), **կալուստերոն**, **կլուստերոլ**, **դանազոլ** (17α-էթինիլ-17β-հիդրոքսիանդրոստ-4-ենոլ[2,3-d]իդոքսազոլ), **դեհիդրոքլորմեթիլտեստոստերոն** (4-քլորո-17β-հիդրոքսի-17α-մեթիլանդրոստա-1,4-դիեն-3-ոն), **դեզոքսիմեթիլտեստոստերոն** (17α-մեթիլ-5α-անդրոստ-2-են-17β-ոլ), **դրոստանոլոն**, **էթիլէստրենոլ** (19-նոր-17α-արեգն-4-են-17-ոլ), **ֆլուօքսիմեստերոն**, **ֆորմեբոլոն**, **ֆուրազաբոլ** (17β-հիդրոքսի-17α-մեթիլ-5α-անդրոստանոլ[2,3-c]-ֆուրազան), **գեստրինոն**, **4-հիդրոքսիտեստոստերոն** (4,17β-դիհիդրոքսիանդրոստ-4-են-3-ոն), **մեստանոլոն**, **մեստերոլոն**, **մետենոլոն**, **մեթանդիենոն** (17β-հիդրոքսի-17α-մեթիլանդրոստա-1,4-դիեն-3-ոն), **մեթանդրիոլ**, **մեթաստերոն** (2α, 17α-դիմեթիլ-5α-անդրոստան-3-ոն-17β-ոլ), **մեթիլդիենոլոն** (17β-հիդրոքսի-17α-մեթիլէստրա-4,9-դիեն-3-ոն), **մեթիլ-1-տեստոստերոն** (17β-հիդրոքսի-17α-մեթիլ-5α-անդրոստ-1-են-3-ոն), **մեթիլնորտեստոստերոն** (17β-հիդրոքսի-17α-մեթիլէստրա-4-են-3-ոն), **մեթիլտրիենոլոն** (17β-հիդրոքսի-17α-մեթիլէստրա-4,9,11-տրիեն-3-ոն), **մեթիլտեստոստերոն**, **միբոլերոն**, **նանդրոլոն**, **19-նորանդրոստենդիոն** (էստր-4-են-3,17-դիոն), **նորբոլետոն**, **նորկլուստերոլ**, **նորէթանդրոլոն**,

<sup>1</sup> Նախկինում փոփոխված 1990թ. սեպտեմբերի 1-ին, 1992թ. հունվարի 24-ին, 1993թ. օգոստոսի 1-ին, 1996թ. հուլիսի 1-ին, 1997թ. հուլիսի 1-ին, 1998թ. մարտի 15-ին, 1999թ. մարտի 15-ին, 2000թ. մարտի 31-ին, 2001թ. սեպտեմբերի 1-ին, 2003թ. հունվարի 1-ին, 2004թ. հունվարի 1-ին, 2005թ. հունվարի 1-ին, 2006թ. հունվարի 1-ին, 2007թ. հունվարի 1-ին:

**օքսաբոլոն, օքսանդրոլոն, օքսիմէստերոն, օքսիմէթոլոն, պրոստանոզոլ** ([3,2-*c*]պիրազոլ-5 $\alpha$ -էթիոալոխոլան-17 $\beta$ -տետրահիդրոպիրանոլ), **քինբոլոն, ստանոզոլոլ, ստենբոլոն, 1-տեստոստերոն** (17 $\beta$ -հիդրօքսի-5 $\alpha$ -անդրոստ-1-են-3-ոն), **տետրահիդրոգեստրինոն** (18 $\alpha$ -հոմո-պրեգն-4,9,11-տրիեն-17 $\beta$ -ոլ-3-ոն), **տրենբոլոն** և նման քիմիական կառուցվածքով կամ նման կենսաբանական ազդեցություն(ներ)ով այլ նյութեր:

բ. Էնդոգենային\*\* անաբոլիկ անդրոգենային ստերոիդներ.

**անդրոստենդիոլ** (անդրոստ-5-են-3 $\beta$ ,17 $\beta$ -դիոլ), **անդրոստենդիոն** (անդրոստ-4-են-3,17-դիոն), **դիհիդրոտեստոստերոն** (17 $\beta$ -հիդրօքսի-5 $\alpha$ -անդրոստան-3-ոն), **պրաստերոն** (դետիդրոէպիանդրոստերոն, DHEA), **տեստոստերոն**, ինչպես նաև հետևյալ մեթաբոլիտները և իզոմերները.

**5 $\alpha$ -անդրոստան-3 $\alpha$ ,17 $\alpha$ -դիոլ, 5 $\alpha$ -անդրոստան-3 $\alpha$ ,17 $\beta$ -դիոլ, 5 $\alpha$ -անդրոստան-3 $\beta$ ,17 $\alpha$ -դիոլ, 5 $\alpha$ -անդրոստան-3 $\beta$ ,17 $\beta$ -դիոլ, անդրոստ-4-են-3 $\alpha$ ,17 $\alpha$ -դիոլ, անդրոստ-4-են-3 $\alpha$ ,17 $\beta$ -դիոլ, անդրոստ-4-են-3 $\beta$ ,17 $\alpha$ -դիոլ, անդրոստ-5-են-3 $\alpha$ ,17 $\alpha$ -դիոլ, անդրոստ-5-են-3 $\alpha$ ,17 $\beta$ -դիոլ, անդրոստ-5-են-3 $\beta$ ,17 $\alpha$ -դիոլ, 4-անդրոստենդիոլ** (անդրոստ-4-են-3 $\beta$ ,17 $\beta$ -դիոլ), **5-անդրոստենդիոն** (անդրոստ-5-են-3,17-դիոն), **էպի-դիհիդրոտեստոստերոն, 3 $\alpha$ -հիդրօքսի-5 $\alpha$ -անդրոստան-17-ոն, 3 $\beta$ -հիդրօքսի-5 $\alpha$ -անդրոստան-17-ոն, 19-նորանդրոստերոն, 19-նորէթիոխոլանոլոն:**

Եթե անաբոլիկ անդրոգենային ստերոիդներից որևէ մեկը կարող է արտադրվել օրգանիզմի կողմից, *Փորձանմուշը* համարվում է այդպիսի *Արգելված նյութ* պարունակող և *Հետազոտության անբարենպաստ արդյունքի* մասին զեկուցվում է այն դեպքերում, երբ այդպիսի *Արգելված նյութի* կամ դրա մեթաբոլիտների կամ նիշերի խտությունը և/կամ դրանց առնչվող որևէ այլ հարաբերակցություն *Մարզիկի փորձանմուշում* այնքան է շեղված մարդկանց ֆիզիոլոգիական նորմերի սահմաններից, որ անհավանական է, որ կարող է համապատասխանել օրգանիզմի կողմից նորմալ էնդոգենային արտադրությանը: *Փորձանմուշը* չի համարվում *Արգելված նյութ* պարունակող այն դեպքում, եթե *Մարզիկն* ապացուցում է, որ այդ *Արգելված նյութի* կամ դրա մեթաբոլիտների կամ նիշերի խտությունը և/կամ դրանց առնչվող որևէ այլ հարաբերակցություն *Մարզիկի փորձանմուշում* նրա ֆիզիոլոգիական կամ ախտաբանական վիճակի հետևանք է:

*Մարզիկի փորձանմուշը* համարվում է *Արգելված նյութ* պարունակող և ենթակա է լաբորատորիայի կողմից *Հետազոտության անբարենպաստ արդյունքի* մասին զեկուցման բոլոր այն դեպքերում և ցանկացած խտության դեպքում, երբ որևէ հուսալի հետազոտական մեթոդով (օրինակ՝ IRMS) լաբորատորիան ապացուցում է, որ *Արգելված նյութն* ունի էկզոգենային ծագում: Այդ դեպքում հետագա հետաքննության անհրաժեշտություն չկա:

Երբ նյութի խտությունը շատ չի շեղվում մարդկանց ֆիզիոլոգիական նորմերի սահմանները, և որևէ հուսալի հետազոտական մեթոդով (օրինակ՝ IRMS) չի որոշվում այդ նյութի էկզոգենային ծագումը, բայց հիմքեր կան ենթադրելու, օրինակ՝ էնդոգենային ստերոիդային կազմի համեմատության հիման վրա, *Արգելված նյութի* հնարավոր *Օգտագործման* վերաբերյալ, կամ, երբ լաբորատորիան զեկուցել է, որ տեստոստերոն/էպիտեստոստերոն (T/E) հարաբերությունը գերազանցում է չորսը (4) մեկի (1) հարաբերությունը, իսկ որևէ հուսալի հետազոտական մեթոդով (օրինակ՝ IRMS) չի հաստատվել նյութի էկզոգենային ծագումը, ապա համապատասխան *Հակադոպինգային կազմակերպությունը* հետագա հետաքննություն է իրականացնում՝ հետազոտելով նախորդ ցանկացած թեստ(եր)ի արդյունքները կամ հետագա թեստ(եր)ի միջոցով:

Երբ պահանջվում է նման հետագա հետաքննություն, լաբորատորիայի կողմից արդյունքները զեկուցվում են որպես ատիպիկ, այլ ոչ անբարենպաստ: Եթե լրացուցիչ հուսալի հետազոտական մեթոդի (օրինակ՝ IRMS) կիրառման արդյունքում լաբորատորիան զեկուցում է, որ արգելված նյութն

ունի էկզոգենային ծագում, ապա հետագա հետաքննություն չի պահանջվում, և Փորձանմուշը համարվում է այդպիսի Արգելված նյութ պարունակող: Եթե չի կիրառվել լրացուցիչ հուսալի հետազոտական մեթոդ (օրինակ՝ IRMS) և առնվազն երեք նախորդ թեստերի արդյունքները մատչելի չեն, ապա համապատասխան Հակադոպինգային կազմակերպության կողմից որոշվում է Մարզիկի ստերոիդային կազմը ժամանակի ընթացքում, այն է՝ եռամսյա ժամանակահատվածում առանց նախնական տեղեկացման երեք թեստի անցկացման միջոցով: Այս ժամանակի ընթացքում հետազոտությունից ստացված արդյունքները զեկուցվում են որպես ատիպիկ: Եթե ժամանակի ընթացքում հաջորդող թեստերի միջոցով որոշվող մարզիկի ստերոիդային կազմը չի համապատասխանում ֆիզիոլոգիական նորմերին, ապա զեկուցվում է Հետազոտության անբարենպաստ արդյունքի մասին:

Բացառապես հազվադեպ եզակի դեպքերում, մեզում կարող է պարբերաբար հայտնաբերվել չափազանց ցածր խտությամբ (նանոգրամներ 1 միլիլիտրում) էնդոգենային ծագման բոլդենոն: Երբ լաբորատորիայի կողմից զեկուցվում է բոլդենոնի նման չափազանց ցածր խտությունների մասին, իսկ որևէ հուսալի հետազոտական մեթոդով (օրինակ՝ IRMS) նյութի էկզոգենային ծագումը չի որոշվել, կարող է անց կացվել հետաքննություն հետագա թեստ(եր)ի միջոցով:

19-նորանդրոստերոնի առնչությամբ լաբորատորիայի կողմից Հետազոտության անբարենպաստ արդյունքի զեկուցումը դիտարկվում է որպես Արգելված նյութի էկզոգենային ծագման գիտական և հիմնավորված ապացույց: Այդ դեպքում հետագա հետաքննության անհրաժեշտություն չկա:

Եթե Մարզիկը հրաժարվում է համագործակցել հետաքննություններին, Մարզիկի փորձանմուշը համարվում է Արգելված նյութ պարունակող:

**2. Այլ անաբոլիկ նյութեր, ներառյալ (ցուցակն սպառիչ չէ).**

**Կլենբուտերոլ, անդրոգենային ընկալիչների ընտրական մոդուլատորներ (SARMs), տիբոլոն, զերանոլ, զիլպատերոլ:**

*Այս բաժնում.*  
\* «էկզոգենային» կոչվում են այն նյութերը, որոնք չեն կարող բնականոն արտադրվել օրգանիզմի կողմից:  
\*\* «էնդոգենային» կոչվում են այն նյութերը, որոնք կարող են բնականոն արտադրվել օրգանիզմի կողմից:

**S2. ՀՈՐՄՈՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍԱԿԵՐՊԵՐ**

Հետևյալ նյութերը և դրանց լիբերիններն արգելված են.

1. էրիթրոպոէտին (EPO),
2. աճի հորմոն (hGH), աճի ինսուլինանման գործոններ (օրինակ՝ IGF-1), աճի մեխանիկական գործոններ (MGFs),
3. գոնադոտրոպիններ (օրինակ՝ LH, hCG)՝ արգելված միայն տղամարդկանց համար,
4. ինսուլիններ,
5. կորտիկոտրոպիններ

և նման քիմիական կառուցվածքով կամ նման կենսաբանական ազդեցություն(ներ)ով այլ նյութեր:

Եթե Մարզիկը չի ապացուցում, որ նյութի խտությունը նրա ֆիզիոլոգիական կամ ֆիսիոլոգիական վիճակի հետևանք է, Փորձանմուշը համարվում է վերոնշյալ Արգելված նյութերից որևէ մեկը պարունակող, երբ այդպիսի Արգելված նյութի կամ դրա մեթաբոլիտների կամ նիշերի խտությունը և/կամ դրանց առնչվող որևէ այլ հարաբերակցություն Մարզիկի փորձանմուշում այնքան է շեղված

մարդկանց ֆիզիոլոգիական նորմերի սահմաններից, որ անհավանական է, որ կարող է համապատասխանել նորմալ էնդոգենային արտադրությանը օրգանիզմի կողմից:

Եթե որևէ հուսալի հետազոտական մեթոդի կիրառման արդյունքում լաբորատորիան զեկուցում է, որ *Արգելված նյութն* էկզոգենային ծագում ունի, *Փորձանմուշը* համարվում է *Արգելված նյութ* պարունակող և ենթակա է *Հետազոտության անբարենպաստ արդյունքի* մասին զեկուցման:

### S3. ԲԵՏԱ-2 ԱԳՈՆԻՍՏՆԵՐ

Բոլոր բետա-2 ագոնիստները, ներառյալ դրանց D- և L-իզոմերները, արգելված են:

Բացառություն են կազմում ֆորմոտերոլը, սալբուտամոլը, սալմետերոլը և տերբուտամոլը, երբ ընդունվում են ներշնչման եղանակով, ընդ որում պահանջվում է Բուժական օգտագործման թույլտվություն պարզեցված ընթացակարգով:

Անկախ Բուժական օգտագործման թույլտվության ստացումից՝ սալբուտամոլի (ազատ պլյուս գլյուկոկորտիկոիդ) խտության գերազանցումը 1000 նգ/մլ-ից համարվում է *Հետազոտության անբարենպաստ արդյունք*, եթե *Մարզիկը* չի ապացուցում, որ տվյալ արդյունքը հանդիսանում է ներշնչման եղանակով ընդունած սալբուտամոլի բուժական օգտագործման հետևանք:

### S4. ՀՈՐՄՈՆԱՅԻՆ ԱՆՏԱԳՈՆԻՍՏՆԵՐ ԵՎ ՍՈՂՈՒԱՏՈՐՆԵՐ

Հետևյալ դասերն արգելված են.

1. Արոմատազի արգելակիչներ, այդ թվում նաև՝ անաստրոզոլ, լետրոզոլ, ամինոգլյուտեթիմիդ, էկզեմեստան, ֆորմեստան, տեստոլակտոն:
2. Էստրոգենային ընկալիչների ընտրական մոդուլատորներ (SERMs), այդ թվում նաև՝ ռալօքսիֆեն, տամօքսիֆեն, տորեմիֆեն:
3. Այլ հակաէստրոգենային նյութեր, այդ թվում նաև՝ կլոմիֆեն, ցիկլոֆենիլ, ֆուլվեստրանտ:
4. Միոստատինային ֆունկցիան(երը) փոփոխող գործոններ, այդ թվում նաև՝ միոստատինի արգելակիչներ:

### S5. ՄԻՋԱՍՈՒՂՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՔՈՂԱՐԿՈՂ ՆՅՈՒԹԵՐ

Քողարկող նյութերն արգելված են: Դրանք ներառում են.

միզամուղներ\*, էպիտեստոստերոն, պրոբենեցիդ, ալֆա-ռեդուկտազի արգելակիչներ (օրինակ՝ ֆինաստերիդ, դուտաստերիդ), պլազմայի փոխարինիչներ (օրինակ՝ ալբումին, դեքստրան, հիդրօքսիէթիլ օսլա) և նման կենսաբանական ազդեցություն(ներ)ով այլ նյութեր:

Միզամուղները ներառում են.

ացետազոլամիդ, ամիլոդիդ, բումետանիդ, կանրենոն, քլորտալիդոն, էտակրինաթթու, ֆուրոսեմիդ, ինդապամիդ, մետոլազոն, սպիրոնոլակտոն, թիազիդներ (օրինակ՝ բենդրոֆլումեթիազիդ, քլորոթիազիդ, հիդրոքլորոթիազիդ), տրիամտերեն, և նման քիմիական կառուցվածքով կամ նման կենսաբանական ազդեցություն(ներ)ով այլ նյութեր (բացառությամբ դրոսպերիդոնի, որն արգելված չէ):

\* Արգելված նյութերի Բուժական օգտագործման թույլտվությունը համարվում է անվավեր, եթե *Մարզիկի* մեզում պարունակվում է միզամուղ՝ զուգորդված շեմային կամ ենթաշեմային խտությամբ *Արգելված նյութի* հետ:

## ԱՐԳԵԿԱԾ ՄԵԹՈՂՆԵՐ

### M1. ԹԹՎԱԾՆԻ ՓՈՆԱՆՑՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

Հետևյալ մեթոդներն արգելված են.

1. Արյան դոպինգ, ներառյալ՝ աուտոլոգիական, հոմոլոգիական կամ հետերոլոգիական արյան կամ ցանկացած ծագման արյան կարմիր բջիջների արտադրանքի օգտագործումը:
2. Արյան՝ թթվածին կլանելու, փոխադրելու և առաքման հատկության արհեստական բարձրացումը, այդ թվում նաև՝ պերֆտորացման, էֆապրոքսիրալի (RSR13) և հեմոգլոբինի փոփոխված արտադրանքի օգտագործման միջոցով (օրինակ՝ հեմոգլոբինի հիման վրա արյան փոխարինիչներ, միկրոպատիճավորված հեմոգլոբինային արտադրանք):

### M2. ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Արգելվում է *Ղոպինգ վերահսկման* ընթացքում հավաքված *Փորձանմուշների Կեղծման* կամ կեղծման փորձի իրականացումը՝ դրանց ամբողջականությունը և վավերականությունը խախտելու նպատակով: Վերջինն այլոց թվում ներառում է մեզի կաթետերիզացիա, փոխարինում և/կամ փոփոխում:
2. Արգելվում է ներերակային ներարկումները: Սուր բժշկական իրավիճակում, երբ այս մեթոդի կիրառումը համարվում է անհրաժեշտ, պահանջվում է հետակտիվ Բուժական օգտագործման թույլտվություն:

### M3. ԳԵՆԱՅԻՆ ԴՈՊԻՆԳ

Արգելվում է բջիջների, գեների, գենային տարրերի կամ գենային արտահայտման փոփոխման ոչ բուժական օգտագործումը, ինչը կարող է բարելավել սպորտային արդյունքը:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՆՈՒԹԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ
--

Ի լրումն վերոնշյալ S1-S5 և M1-M3 բաժիններում թվարկված խմբերի՝ հետևյալ խմբերն արգելված են մրցութային շրջանում.

### ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

#### S6. ԽՅԱՆԻՉՆԵՐ

Բոլոր խթանիչները (համապատասխան դեպքերում դրանց երկու (D- և L-) օպտիկական իզոմերները ներառյալ) արգելված են՝ բացառությամբ տեղային օգտագործման իմիդազոլի ածանցյալների և 2008թ. Մոնիտորինգի ծրագրում\* ներառված խթանիչների:

Խթանիչները ներառում են.

ադրաֆինիլ, ադրենալին\*\*, ամֆեպրամոն, ամիֆենազոլ, ամֆետամին, ամֆետամինիլ, բենզֆետամին, բենզիլպիպերազին, բրոմանտան, կատին\*\*\*, կլոբենզորեքս, կոկաին, կրոպրոպամիդ, կրոտետամիդ, ցիկլազոդոն, դիմեթիլամֆետամին, էֆեդրին\*\*\*\*, էտամիլան, էթիլամֆետամին, էթիլէֆրին, ֆամպրոֆազոն, ֆենբուտրազատ, ֆենկամֆամին, ֆենկամին, ֆենետիլին, ֆենֆլուրամին, ֆենպրոպորեքս, ֆուրֆենորեքս, հեպտամինոլ, իզոմեթապտեն, լեվմեթամֆետամին, մեկլոֆենօքսատ, մեֆենորեքս, մեֆենտերմին, մեզոկարբ, մեթամֆետամին (D-), մեթիլենդիօքսիամֆետամին, մեթիլենդիօքսիմեթամֆետամին, p-մեթիլամֆետամին, մեթիլէֆեդրին\*\*\*\*, մեթիլֆենիդատ, մոդաֆինիլ, նիկեթամիդ, նորֆենէֆրին, նորֆենֆլուրամին, օկտոպամին, օրտետամին, օքսիլոֆրին, պարահիդրօքսիամֆետամին, պեմոլին, պենտետրազոլ, ֆենդիմետրազին, ֆենմետրազին, ֆենպրոմեթամին, ֆենտերմին, 4-ֆենիլպիրացետամ (կարֆեդոն), պրոլինտան, պրոպիլհեքսեդրին, սելեգիլին, սիբուտրամին, ստրիխնին, տուամինոհեպտան և նման քիմիական կառուցվածքով կամ կենսաբանական ազդեցություն(ներ)ով այլ նյութեր:

\* 2008թ. Մոնիտորինգի ծրագրում ներառված հետևյալ նյութերը (բուպրոպիոն, կոֆեին, ֆենիլէֆրին, ֆենիլպրոպանոլամին, պիպրադոլ, պսևոնէֆեդրին, սինէֆրին) չեն համարվում *Արգելված նյութեր*:

\*\* **Ադրենալինը**, որը պարունակվում է տեղային անզգայացման դեղամիջոցներում կամ նախատեսված է տեղային օգտագործման համար (օրինակ՝ քթի, աչքի կաթիլների ձևով), չի արգելվում:

\*\*\* **Կատինը** արգելված է, երբ մեզում դրա խտությունը գերազանցում է 5 միկրոգրամ միլիլիտրը:

\*\*\*\* **Էֆեդրինը և մեթիլէֆեդրինը** արգելված են, երբ մեզում դրանց խտությունները գերազանցում են 10 միկրոգրամ միլիլիտրը:

Այն խթանիչը, որն ուղղակիորեն չի նշված այս բաժնում որպես օրինակ, համարվում է Հատուկ նյութ միայն այն դեպքում, երբ *Մարզիկը* հաստատում է, որ այդ նյութի օգտագործումը դիտարկվում է որպես հակադոպինգային կանոնների չմտադրված խախտում՝ դեղամիջոցներում այդ նյութի լայն մատչելիության կամ որպես դոպինգ դրա բարեհաջող չարաշահման անհավանականության պատճառով:

#### S7. ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ

Հետևյալ թմրանյութերն արգելված են.

բուպրենորֆին, դեքստրոմորամիդ, դիամորֆին (հերոին), ֆենտանիլ և դրա ածանցյալներ, հիդրոմորֆոն, մեթադոն, մորֆին, օքսիկոդոն, օքսիմորֆոն, պենտազոցին, պեթիդին:

**S8. ԿԱՆԱՔԻՆՈՒՂՆԵՐ**

Կանաքինոիդները (օրինակ՝ հաշիշ, մարիխուանա) արգելված են:

**S9. ՉԼՅՈՒԿՈՎՈՐՏԻԿՈՍՏԵՐՈՒՂՆԵՐ**

Բոլոր գլյուկոկորտիկոստերոիդներն արգելված են, եթե կիրառվում են բերանի, ուղիղ աղիքի միջոցով, ներերակային կամ միջմկանային եղանակով: Դրանց օգտագործման համար պահանջվում է Բուժական օգտագործման թույլտվություն:

Այլ կիրառման եղանակների համար (ներհոդային/ հարհոդային/ հարջլային/ էպիդուրալ/ ներմաշկային ներարկումներ և ներշնչում) պահանջվում է Բուժական օգտագործման թույլտվություն պարզեցված ընթացակարգով, բացառությամբ ստորև նշված դեպքերի:

Տեղային օգտագործման դեղամիջոցները, երբ կիրառվում են մաշկի (ներառյալ դեղորայքային էլեկտրաֆորեզ/ ձայնաֆորեզ), ականջի, քթի, աչքի, կոկորդի, լնդերի և հետանցքի հիվանդությունների ժամանակ, արգելված չեն և չեն պահանջում Բուժական օգտագործման թույլտվության որևէ ձև:

## ԱՌԱՆՁԻՆ ՍՊՈՐՏԱԶԵԿԵՐՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

### P1. ԱԼԿՈՀՈԼ

Ներքոնշյալ սպորտաձևերում սպիրտն (էթանոլ) արգելված է միայն *Մրցութային ժամանակահատվածում*: Հայտնաբերվում է արտաշնչած օդի և/կամ արյան հետազոտության միջոցով: Ալկոհոլի թույլատրելի շեմային խտությունը (արյունաբանական ցուցանիշներ) յուրաքանչյուր Ֆեդերացիայի համար նշված է փակագծերում:

- |   |                  |
|---|------------------|
| • Օդանավորություն (FAI)   | (0.20 գրամ/լիտր) |
| • Նետաձգություն (FITA, IPC)   | (0.10 գրամ/լիտր) |
| • Ավտոսպորտ (FIA)   | (0.10 գրամ/լիտր) |
| • Պետանկ (IPC)  | (0.10 գրամ/լիտր) |
| • Կարատե (WKF)  | (0.10 գրամ/լիտր) |
| • Ժամանակակից հնգամարտ (UIPM)<br>հրաձգություն ներառող դիսցիպլիններում | (0.10 գրամ/լիտր) |
| • Մոտոսպորտ (FIM)   | (0.10 գրամ/լիտր) |
| • Մոտորանավակային սպորտ (UIM)   | (0.30 գրամ/լիտր) |

### P2. ԲԵՏԱ-ԲԼՈՎԱՏՈՐՆԵՐ

Ներքոնշյալ սպորտաձևերում բետա-բլոկատորներն արգելված են միայն *Մրցութային ժամանակահատվածում*, եթե այլ կերպ չի սահմանված:

- Օդանավորություն (FAI)
- Նետաձգություն (FITA, IPC) (նաև արգելված են *Ոչ մրցակցային շրջանում*)
- Ավտոսպորտ (FIA)
- Բիլիարդ (WCBS)
- Բոբսլեյ (FIBT)
- Պետանկ (IPC)
- Բրիջ (FMB)
- Քարլինգ (WCF)
- Մարմնամարզություն (FIG)
- Մոտոսպորտ (FIM)
- Ժամանակակից հնգամարտ (UIPM)  
հրաձգություն ներառող դիսցիպլիններում
- Բոուլինգ (FIQ)
- Մոտորանավակային սպորտ (UIM)
- Առազաստանավային սպորտ (ISAF) (միայն դեկերով մրցարշավներում)
- Հրաձգություն (ISSF, IPC) (նաև արգելված են *Ոչ մրցակցային շրջանում*)
- Ղահուկասպորտ/սնոուբորդ (FIS) ղահուկացատկ, օդային ֆրիսթայլ/հալֆպայփ և սնոուբորդ հալֆպայփ/բիգ էյր
- Ըմբշամարտ (FILA)

Բետա-բլոկատորները ներառում են (ցուցակն սպառիչ չէ).

ացեբուտոլոլ, ալպրենոլոլ, ատենոլոլ, բետաքսոլոլ, բիսոպրոլոլ, բունոլոլ, կարտեոլոլ, կարվեդիլոլ, ցելիպրոլոլ, էսմոլոլ, լաբետալոլ, լեվոբունոլոլ, մետիպրանոլոլ, մետոպրոլոլ, նադոլոլ, օքսպրենոլոլ, պինդոլոլ, պրոպրանոլոլ, սոտալոլ, տիմոլոլ:

### ՀԱՏՈՒԿ ՆՅՈՒԹԵՐ\*

«Հատուկ նյութերը»\* թվարկված են ստորև.

- Բոլոր ներշնչման բետա-2 ազոնիստները՝ բացառությամբ սալբուտամոլի (ազատ պլյուս գլյուկոկորոնիդ) 1000 նգ/մլ-ից ավելի խտության դեպքում և կլենբուտերոլի (թվարկված են S1.2 Այլ անաբոլիկ նյութեր բաժնում),
- ալֆա-ռեդուկտազի արգելակիչներ, պրոբենցիդ,
- կատին, կրոպրոպամիդ, կրոտետամիդ, էֆեդրին, էտամիվան, ֆամպրոֆազոն, հեպտամինոլ, իզոմեթպտեն, լեվմեթամֆետամին, մեկլոֆենոքսատ, ք-մեթիլամֆետամին, մեթիլէֆեդրին, նիկեթամիդ, նորֆենեֆրին, օկտոպամին, օրտետամին, օքսիլոֆրին, ֆենպրոմեթամին, պրոպիլիեքսեդրին, սելեգիլին, սիբուտրամին, տուամինոհեպտան և ցանկացած այլ խթանիչներ, որոնք մասնավորապես թվարկված չեն S6 բաժնում, որոնց առնչությամբ *Մարզիկը* հաստատում է, որ այն համապատասխանում է S6 բաժնում նկարագրված պայմաններին,
- կանաբինոիդներ,
- բոլոր գլյուկոկորտիկոստերոիդները,
- ալկոհոլ,
- բոլոր բետա-բլոկատորները:

\* «Արգելված նյութերի ցուցակը կարող է ներառել հատուկ նյութեր, որոնք դիտարկվում են որպես հակադոպինգային կանոնների չմտադրված խախտում՝ դեղամիջոցներում դրանց լայն մատչելիության կամ որպես դոպինգ դրանց բարեհաջող չարաշահման անհավանականության պատճառով:» Այս նյութերի օգտագործման արդյունքում դոպինգային կանոնների խախտումը կարող է հանգեցնել ավելի մեղմ պատժամիջոցների, եթե «...*Մարզիկը* հաստատում է, որ այդ հատուկ նյութի օգտագործումը նպատակ չի հետապնդել բարձրացնելու մարզական վիճակը...»

Նշում. «Հատուկ նյութերի» վերաբերյալ այս բաժինը, ինչպես (\*) ծանոթագրությամբ, այնպես էլ առանց դրա, կարող է ընդգրկվել կամ չընդգրկվել 2008թ. Արգելված ցուցակը կիրարկող ներպետական ակտերում: